ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 20.05.2019թ.
ժամը 15^{30}

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ. Ուստյանը,

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Է. Համբարձումյանը,

ՀՀ ՊՆ ՊԱՀ համալսարանի էլեկտրոնային-գիտական գրադարանի գրադարանավար, ենթասպա Անժելա Հակոբյանը,

ՀՀ ՊՆ ՊԱՀ համալսարանի ԱՈՀԻ ռազմավարական խաղերի և մոդելավորման խմբի գիտնական-վերլուծաբան Ա. Դավթյանը,

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետի պաշտոնակատար Ա. Սահակյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/2» ծածկագրով գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Սահակյան)

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների Կոմիտեի կողմից տրամադրված հարցման մասին տեղեկատվությունը քննարկելու մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/2» ծածկագրով գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված հարցման մասին տեղեկատվությունը քննարկելու մասին.

(Ա. Սահակյան)

1.1 Քանի որ 15.05.2019թ.-ին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների Կոմիտեի կողմից տրամադրված՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված հարցման մասին տեղեկատվության համաձայն՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի 1-ին տեղն զբաղեցրած մասնակիցը՝ «Մարգսյան Թրեյդ» ՍՊԸ-ն, հայտը ներկայացնելու օրվա (29.04.2019թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով գնահատող հանձնաժողովի կողմից չի գնահատվել:

1.2 Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը համարեց (որակեց) «Մարգսյան Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտարարությունները իրականությանը չհամապատասխանող և որոշեց տվյալ մասնակցի հայտը մերժել:

1.3 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Մարգսյան Թրեյդ» ՍՊԸ-ն 13.05.2019թ.-ին ներկայացրել է լրացուցիչ տեղեկատվություն, որի համաձայն տվյալ մասնակիցը 10.05.2019թ.-ի դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չի ունեցել «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց տվյալ մասնակցի տվյալները չուղարկել լիազորված մարմին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/2» ծածկագրով գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին.

(Ա. Սահակյան)

Ընդունել ի գիտություն, որ 10.05.2019թ.-ին գնահատող հանձնաժողովի N 4.2 որոշմամբ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգը 4-րդ չափաբաժնի մասով հայտարարվել էր չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

2.1 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգը 1, 2, 3, 5 և 6-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

2.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-14/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի չկայացման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Գ. Ուստյան

Գնահատող Է. Համբարձումյան

Գնահատող Ա. Հակոբյան

Գնահատող Ա. Դավթյան

Գնումները համակարգող Ա. Սահակյան